09.11.25 - 16.11.25
09:00
Անցանց
Գրանցումը բաց է
☑

Պահպանել Google օրացույցում

Ներկայացումը հիմնված է Նիզամի Գյանջավու «Խոսրով և Շիրին» պոեմի վրա։ Այն պատմություն է սիրո, հիշողության և մարդու ներաշխարհի խճանկարի մասին։ Լեգենդար արքա Խոսրովը, լսելով Շահրզադի և նրա գերության պատմությունը, մի պահ կարծում է, թե Շահրիարը՝ Շահրզադի տիրակալը, իր և Շիրինի որդին է։ Այդ մոլորությունը նրան տանում է դեպի անցյալ, որտեղ կենդանանում են նրա սիրո, հավատարմության ու ցավի հիշողությունները։

Խոսրովը սկսում է պատմել Շահրզադին իր և Շիրինի անմահ սիրո պատմությունը՝ վերապրելով այն մինչև Շահրիարի ծնունդը։ Իսկ Շահրազադը, կարծես հանդիսատեսի հայացքը մարմնավորելով, դառնում է պատմության ականատեսը՝ հետևելով այդ մեծ սիրո խորահույզ պատմությանը մինչև հերոսների ողբերգական վախճանը։

Հատկանշական է, որ ներկայացումը երկլեզու է, և ներառված են ինչպես իրանցի, այնպես էլ հայ դերասաններ։

Ներկայացման տևողությունը՝ 50 րոպե

Հեղինակ և բեմադրիչ՝ Համեդ Շեյխի

Պրոդյուսեր՝ Ֆաթեմե Աբդոլրահիմի

Ժամանակացույց՝

Նոյեմբերի 10-ին՝ ժամը 17:00-ին, Մաչանենց տուն մշակութային համալիր, հասցե՝ ք. Էջմիածին, Շահումյան 36։

Նոյեմբերի 11-ին՝ ժամը 14:00-ին, ԵՊՀ Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի դահլիճ։

Նոյեմբերի 12-ին՝ ժամը 16:00-ին, Ամո Խարազյանի անվան դրամատիկական թատրոն, հասցե՝ ք. Արտաշատ, Օգոստոսի 23-ի փողոց։

Նոյեմբերի 13-ին՝ ժամը 17:00-ին, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ, հասցե՝ Ամիրյան 26։

Մուտքն ազատ է։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am